4365

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 105 - 25

Նախաձեռնող՝ *«ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ*
ք. Երևան, Այգեստան 9

Գործունեությունը՝ *«Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատում*
Տավուշի մարզ

Առդիր՝ 10 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 105 - 25

«07» 05 **2025թ.**

«Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2024-2033թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակ՝	Հիմնադրույթային փաստաթուղթ / ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն, անտառկառավարման պլան, գծագրական նյութեր, քարտեզներ
Գտնվելու վայրը՝	Տավուշի մարզ, Բերդ համայնքի Բերդ բնակավայր, Իջևան համայնքի Գանձաքար բնակավայր, Դիլիջան համայնքի Աղավնավանք բնակավայր

Ներածական մաս. Տավուշի մարզի «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառկառավարման պլանի մշակման համար հիմք են հանդիսացել շրջակա միջավայրի նախարարության՝ Անտառային կոմիտեի և «ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը: ՌԷԳ հաշվետվությունը կազմվել է՝ համաձայն Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 21-ի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի՝ «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառկառավարման պլանը հանդիսանում է հիմնադրույթային փաստաթուղթ:

Անտառտնտեսության 2024-2033թթ. կառավարման պլանի նպատակն է «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղի կազմում ընդգրկված յոթ՝ Ծաղկավանի (5507,0 հա), Այգեպարի (3289,0 հա), Բերդի (9420,0 հա), Նավուրի (7588,0 հա), Նորաշենի (6643,0 հա), Արծվաբերդի (7008,0 հա) և Այգեձորի (7456,0 հա) անտառպետությունների համար նախատեսել կայուն անտառտնտեսության կառավարում՝ առաջիկա 10 տարիների համար: Արծվաբերդի անտառտնտեսության ընդհանուր տարածքը կազմում է 46.911 հա:

Նկարագրական մաս. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Արծվաբերդի անտառտնտեսություն» մասնաճյուղը (այսուհետ՝ Անտառտնտեսություն) հիմնականում գտնվում է ՀՀ հյուսիս-արևելքում՝ Տավուշի մարզի Բերդ համայնքի, մասամբ՝ Իջևանի (Գանձաքար) և Դիլիջանի (Աղավնավանք) համայնքների վարչական շրջանների սահմաններում:

Անտառտնտեսության տարածքի ձգվածությունը հյուսիսից հարավ 38 կմ է, արևելքից արևմուտք՝ 35 կմ:

Անտառտնտեսությունը հյուսիս-արևմուտքից 10,5 կմ ձգվածությամբ սահմանակցում է Իջևանի անտառտնտեսության Այգեհովիտի անտառպետությանը, արևմուտքից 3 կմ երկարությամբ՝ Իջևանի անտառտնտեսության Գանձաքարի անտառպետությանը, արևելքից մոտ 57 կմ սահմանակցում է Ադրբեջանի հանրապետությանը, հյուսիս-արևելքից՝ Բերդի ենթաշրջանի համայնքային հողերին:

Անտառտնտեսության անտառները գտնվում են փոքր Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսային հատվածում՝ հյուսիս-արևելյան անտառաճման և անտառտնտեսական շրջանում և տեղաբաշխված են փոքր Կովկասյան լեռնահամակարգի Միափորի լեռնաշղթայից դեպի Կուրի հովիտն իջնող Հախումի, Կենացի, Տավուշի և Խնձորուտի լեռնաբազուկների վրա՝ ընդգրկելով Հախում, Տավուշ, Խնձորուտ և Հախինջա գետերի վերին հոսանքների ջրահավաք ավազանները: Անտառտնտեսության տարածքները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 600-2100 մ բարձրությունների վրա:

Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը բնութագրվում է խիստ կտրտվածությամբ և լանջերի դիրքադրության փոփոխությամբ, որտեղ տեղաբաշխված են 16071,5 հա անտառներ (ընդհանուր անտառածածկ մակերեսի 58,6 %-ը), իսկ հարավային կողմնադրությունների լանջերին՝ 11322,8 հա (41,4 %): Լանջերն ըստ թեքության բաժանվում են հարթ՝ մինչև 10° թեթև զառիվայր, 11-20° զառիվայր, 21-30°, կտրուկ զառիվայր, 30°-ից բարձր խիստ կտրուկ զառիվայր:

Անտառտնտեսության տարածքում գերակշռում են լեռնային դարչնագույն և լեռնային գորշ անտառային հողերը: Անտառի ստորին գոտում (800 մետրից ցածր) տեղաբաշխված են սննդանյութերով աղքատ կմախքային հողերը:

Անտառտնտեսության տարածքը պատված է մանր գետակների ցանցով: Անտառտնտեսության տարածքում հոսում են Վարագաջուր (Հախում), Տավուշ, Խնձորուտ և Աղնջա (Հախինջա) գետերը: Լճեր և ճահճուտներ տարածքում չկան: Կառուցված են Վարագաջուրի (Հախումի), Տավուշի, Խնձորուտի և Ծիլի ջրամբարները, որոնք նույնպես իրենց ազդեցությունն են ունեցել կենսաբազմազանության ձևավորման վրա:

Անտառտնտեսության տարածքում կլիմայական պայմանները փոփոխվում են ուղղաձիգ գոտիականությամբ, լեռնալանջերի ստորին մասերում չափավոր տաք է, ավելի վեր՝ չափավոր ցուրտ, օդի հարաբերական խոնավության տարեկան միջինը՝ 72 %: Անտառաճման պայմանները նպաստավոր են ոչ քիչ քանակության ծառաթփատեսակների աճեցման և բնական վերականգնման համար:

Շամշադինի (ներկայիս Արծվաբերդի) անտառտնտեսությունը կազմավորվել է 1947թ.՝ երեք անտառպետություններով: 1954թ. վերակազմավորվել է 5՝ Ծաղկավան, Նավուր, Այգեձոր, Ղրղի և Բերդ անտառպետությունների՝ ընդհանուր 35.869 հա մակերեսով: 1991թ. անտառտնտեսությունը վերանվանվել է Տավուշի, 1999թ.՝ Բերդի, այնուհետև՝ Արծվաբերդի անտառտնտեսության:

Անտառտնտեսության ներքին սահմաններն որոշվել են ռելիեֆային առանձնահատկություններով (ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահմաններ՝ օգտագործելով երկրակարգացման համակարգեր, արբանյակային պատկերներ և տեղագրական քարտեզներ:

Նախկին Շամշադինի անտառտնտեսության անտառներում ուսումնասիրություններ առաջին անգամ կատարվել են դեռևս 1926 թվականին, այնուհետև 1940-1941թթ.

իրականացվել է անտառշինություն 36589 հա մակերեսի վրա: 1951թ. անտառշինության տվյալներով այն կազմել է 35872 հա: Հաջորդող անտառշինություններն իրականացվել են 1958-1959թթ., 1968-1969թթ., 1978-1979թթ., 1988-1989թթ., իսկ վերջին անտառշինությունը՝ 2008թ (անտառտնտեսության մակերեսը կազմել է 42.837 հա):

Անտառտնտեսության տարածքը (46.911 հա) բաժանվել է 246 քառակուսիների, ամենափոքր քառակուսու մակերեսը 12 հա է (Այգեպարի անտառպետություն), իսկ ամենամեծը՝ Նավուրի անտառպետությունում 625 հա է, միջին մակերեսը՝ 183 հա: Նախորդ անտառկառավարման պլանի համեմատ՝ քառակուսիների քանակը նվազել է 26-ով, սակայն հատվածների ընդհանուր թիվն ավելացել է 956-ով, հատվածի միջին մակերեսը՝ 0,18-ով:

Անտառտնտեսության անտառների քարտեզագրման համար հիմք են հանդիսացել Անտառտնտեսության 2007թ. անտառշինության քարտեզագրական նյութերը, 1:10000 մասշտաբի տեղագրական քարտեզները, ծրագրի տարածքի արբանյակային պատկերները, համայնքների հատակագծերն ու կադաստրային վերջին քարտեզները:

Համայնքների վարչական տարածքներում անտառային հողերի գույքագրման և գնահատման արդյունքներով բացահայտվել են համայնքների կադաստրային քարտեզներում անտառային հողատեսքերի անճշտությունները, որոնք քարտեզագրվել և համաձայնեցվել են համապատասխան համայնքների հետ:

Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառային հողերը զբաղեցնում են 97,58 % (45773,6 հա), ոչ անտառային հողերը՝ 2,42 %: Անտառածածկ մակերեսը՝ 40558,0 հա (86,5 %), ընդ որում անտառածածկի ընդամենը 0,9 %-ն է անտառմշակույթ, 99,1 %-ը բնական անտառներ են, չմիակցված սաղարթով անտառմշակույթները՝ 49,8 հա: Ոչ անտառածածկ տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 5163,8 հա, նույն թվում բացատները և պարապուտ տարածքները միասին՝ 3780,2 հա, նոսրուտները՝ 1383,6 հա:

Անտառտնտեսության ընդհանուր տարածքի բաժանումն ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի հետևյալն է՝

- պաշտպանական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է ամբողջ տարածքի 49,9 %-ը (22835,6 հա), որից անտառածածկը՝ 18364,9 հա է, նույն թվում անտառմշակույթները՝ 180,1 հա: Անտառային բացատները և բաց (պարապուտ) տարածքները՝ 3321,7 հա, նոսրուտները՝ 1097,2 հա,
- հատուկ նշանակության հողատեսքերը զբաղեցնում են 3967,5 (8,7 %), որից անտառածածկ մակերեսը՝ 3222,6 հա, նույն թվում անտառմշակույթները՝ 2,6 հա, անտառային բացատները և բաց տարածքները՝ 458,5 հա, նոսրուտները՝ 286,4 հա,
- արտադրական նշանակության ընդհանուր հողատեսքերը (ամբողջությամբ անտառածածկ) զբաղեցնում են 18970,5 հա (41,4 %):

Անտառտնտեսության տարածքի գերակշռող մասը տարախոտային և շուղախոտային տիպի անտառներ են՝ համապատասխանաբար 34,6 % (14016,9 հա) և 39,6 % (16080,9 հա), բոշխային տիպը՝ 13,7 %-ը (5560,7 հա):

Ծառուտների միջին տարիքը 102 է, միջին բոնիտետային դասը՝ 3,53, միջին լրիվությունը՝ 0,52, 1 հեկտարի միջին պաշարը՝ 166 խտմ^3, 1 հեկտարի միջին աճը՝ 1,62 մ^3: Համեմատաբար բարձր բոնիտետային դասով առանձնանում են սոճուտները՝ միջին բոնիտետային դասը՝ 3,2, հունական ընկուզենին՝ 2,5, թեղին՝ 2,0: Սերմնային կաղնուտներինը 3,7 է: Գնահատման արդյունքում՝ ծառուտի միջին տարիքը ավելացել է ընդամենը 3 տարով, իսկ անտառածածկի միջին պաշարը նվազել է 3 մ^3, ծառուտի կազմում, մասնավորապես 0,2 միավորով նվազել է հաճարենու մասնակցությունը, 1-ով,

ավելացել է բոխու մասնակցությունը, որոշակի նվազել է արժեքավոր հացենի և թխկի տեսակների մասնաբաժինը ծառուտի կազմում:

Անտառտնտեսությունում գերակշռում է համեմատաբար հարուստ աճման պայմաններով տարածքները՝ (C1, C2, C3) 55,8%, իսկ ոչ այնքան բարենպաստ A-B տիպերը միասին՝ 44,2%-ը:

Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են խոշորառէջ կաղնին, որի սերմնային և կոճղաշիվային ծառուտները միասին զբաղեցնում են 12127,7 հա՝ 1823337 խտմ³ ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 29,9 %-ը և ընդհանուր պաշարի 27,1 %-ը, ընդ որում 2007թ. համեմատությամբ մակերեսը ավելացել է 1157,2 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 265427 խտմ³-ով, հաճարենու գերակշռությամբ ծառուտները՝ 20001,3 հա, 4064795 խտմ³ (անտառածածկի 49,3 %-ը և պաշարի 60,4 %-ը), 2007թ. համեմատությամբ մակերեսը ավելացել է 754,4 հեկտարով, ընդհանուր պաշարը նվազել է 170195 խտմ³-ով, բոխու գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 4218,9 հա, ընդհանուր պաշարը 605189 խտմ³ (անտառածածկի 10,4 %-ը և պաշարի 9,0 %-ը), 2007թ. համեմատությամբ զբաղեցրած մակերեսը ավելացել է 128,3 հեկտարով, ընդհանուր պաշարը 22799 խտմ³-ով, սոճուտները՝ 80,6հա, 7539 խտմ³ (անտառածածկ տարածքի 0,2 %-ը և պաշարի 0,1 %-ը), 2007թ. համեմատությամբ ընդհանուր մակերեսը նվազել է 80,4 հեկտարով, ընդհանուր պաշարը՝ 2551 խտմ³-ով:

Մնացած տեսակները միասին կազմում են անտառածածկի 10,2 %-ը և ընդհանուր պաշարի 3,4%-ը:

Էկոլոգիական վիճակի կարգավորման և բարելավման նպատակով կարևորվում է բնափայտային անտառօգտագործման հիմնավորված նախագծումը և իրականացումը, ինչը կապահովի անտառների կայունությունը ու երկարաժամկետ կայուն օգտագործումը: Փայտանյութի իրացման տարեկան միջին ծավալը կազմում է 6676 խտմ³, ամբողջությամբ կարծրատերևավորներ: Փայտանյութի օգտագործման ինտենսիվությունը 1 հա անտառածածկի հաշվով կազմում է՝ անտառվերականգնման հատումներում 57,5 մ³, խնամքի հատումներում՝ 23,9 մ³ (նոսրացման հատումներ 12,2 մ³, անցումային հատումներ՝ 25,0 մ³) և սանիտարական հատումներում՝ 21,5 մ³ :

Կարևորվում է նաև կառավարման շրջանում հատումների և վերականգնման հիմնավորված հավասարակշռության պահպանումը: Նախատեսվող հատումների ընդհանուր մակերեսը կազմում է 2407,4 հա, վերականգնման նախատեսվող ընդհանուր մակերեսը կազմում է ընդհանուր 3364,4 հա, նույն թվում ցանկապատի կառուցմամբ մատղաշի պահպանմամբ ընդհանուր մակերեսը 3000 հա է, իսկ անտառմշակույթների հիմնմամբ՝ 144,6 հա, որից սոճին՝ 8,5 հա, կարծրատերևավորները՝ 123,1 հա և լորենին՝ 13,0 հա: Նոսրուտներում և ցածր լրիվության ծառուտներում նախատեսվում է իրականացնել բնական վերաճի օժանդակման միջոցառումներ՝ ընդհանուր 211,8 հա:

Անտառտնտեսությանը որպես հարակից բնակավայրեր ընդունվել են անտառների 5 կմ-ոց գոտում ընկած բնակավայրերը, որոնք ներառված են Բերդ խոշորացված համայնքում՝ 1 քաղաքային և 16 գյուղական բնակավայրեր: Ջեռուցման փայտի նվազագույն պահանջարկն ընդհանուր հաշվով գնահատվում է մոտ 60000 մ³:

Յուրաքանչյուր տարում Անտառտնտեսության անտառներում առաջացած բնական թափուկը կազմում է մոտ 24000 հազ մ³ (ընթացիկ աճի մոտ 30 %-ը կամ անտառածածկի 1 հա հաշվով մոտ 0,60 մ³), որից համայնքների մոտակա տարածքների բնափայտը գրեթե ամբողջությամբ իրացվում է ազգաբնակչության կողմից՝ որպես վառելափայտ:

Անտառտնտեսության տարածքն աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ, ռելիեֆի խայտաբղետությամբ և դրան համապատասխան բուսական

և կենդանական աշխարհի հարուստ կենսաբազմազանությամբ, որը հիմնականում պայմանավորված է աշխարհագրական դիրքով և ծովի մակերևույթից բարձրությամբ:

Արծվաբերդի անտառային տարածքն ամբողջությամբ մտնում է Իջևանի ֆլորիստական շրջանի մեջ, որտեղ հիմնական բուսական տիպը անտառայինն է, փոքր տարածքներ են զբաղեցնում չոր նոսր անտառները և ենթալպյան համակեցությունները:

Անտառտնտեսության տարածքում հանդիպում են անոթավոր բույսերին 95 ընտանիքի և 320 ցեղին պատկանող 576 տեսակ, բույսերից 16 տեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Տարբեր ժամանակներում հայտնաբերվել են Կարմիր գրքում գրանցված սնկերի 7 տեսակ:

Անտառտնտեսության բազմատարրությունն ապահովում է անողնաշար և ողնաշարավոր կենդանիների բազմազանությունը (41 տեսակ գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում): Անտառտնտեսության որոշ տեղամասեր հանդիսանում են ազնվացեղ եղջերուի համար բնակմիջավայր, քանի որ այդ տեսակի առկայությունն առայժմ չի հաստատվել: Արծվաբերդի անտառտնտեսության տարածքով անցնող Վարագաջուր/Հախում, Տավուշ, Խնձորուտ գետերում և դրանց մի քանի վտակներում հանդիպում են մոտ 9 ձկնատեսակներ:

Սողուններից ՀՀ Կարմիր գրքում գրանցված է 7 տեսակ, որոնցից մեծամասնությունն ունի պահպանության կարիք:

Կենսաբազմազանության հիմնական վտանգները շարունակում են մնալ ապօրինի ծառահատումները, որսագողությունը, չկանոնակարգված ձկնորսությունը, ջրերի աղտոտվածությունը, արածեցումը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը, անտառային հրդեհները, որոնք ազդում են ձվադրման և բնադրավայրերի ոչնչացման վրա:

Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա ազդեցություն կարող է ունենալ կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացումը և խոնավության նվազումը, ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածումը և այլն:

Մոնիթորինգի ենթակա կենդանատեսակներ կարող են հանդիսանալ կաթնասուններից՝ գորշ արջը, կովկասյան ազնվացեղ եղջերուն և վայրի խոզը, թռչուններից՝ կովկասյան մարեհավը, իսկ սողուններից՝ լեռնատափաստանային և հայկական իժերը:

Անտառտնտեսության տարածքում հանդիպող Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակներն անվանական ներկայացված են գնահատման հաշվետվությունում:

Ազգաբնակչությունն օգտվում է ծառուտներից և ենթանտառից՝ անձնական և կենցաղային կարիքների համար՝ հավաքելով ընկույզ, տանձ, խնձոր, մասուր և այլն: Պտուղ-հատապտուղների գերակշռությամբ և մասնակցությամբ ծառուտներից ու ենթանտառից ակնկալվող բերքը գնահատվել է մոտ 214800 կգ:

Անտառտնտեսության շրջակա տարածքներում գրանցված են բնության 7 հուշարձաններ: Անտառտնտեսության և հարակից տարածքների պատմամշակութային հուշարձանները 13 են:

Հարուստ բնությունը, մաքուր օդն ու ջուրը, բազմաթիվ պատմամշակութային կառույցների առկայությունը, օրգանական սնունդը նախադրյալներ են ստեղծում տարածքում տուրիզմի զարգացման (ուղիներ, ձիարշավներ, քայլարշավներ, տեսարժան վայրեր, հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ և այլ) համար: Ներկայումս նման ծառայություններ հասանելի չեն: Էկոզբոսաշրջության զարգացումը նույնպես կարող է նպաստել անտառների կայուն կառավարմանը:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТНОЙ КОМИССИИ
COMMISSION OF EXPERTS

Անտառտնտեսության տարածքներում հրդեհավտանգության միջին դասը 2,75 է: Անտառային հրդեհների կանխարգելման, նրանց տարածման ու մարման համար անտառաշինության կողմից նախագծվել են հակահրդեհային համալիր միջոցառումների անցկացում, այդ թվում՝ նախազգուշացնող ցուցատախտակների տեղադրում, հանգստի և ծխելու տեղերի առանձնացում, ջրավազանների կառուցում, կրակմարիչների ձեռք բերում, հակահրդեհային ճանապարհների վերանորոգում, հակահրդեհային իրազեկության բարձրացում հարակից համայնքներում և այլն:

Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման շրջանակներում սահմանվել են՝ անտառտնտեսության առաջնային և երկարաժամկետ նպատակները: Կատարվել են տարածքի անտառների և անտառային հողերի քարտեզագրում՝ ըստ անտառի կառավարման պլանի, բոնիտետի, լրիվության, գերակշռող ծառատեսակների, հասակային դասերի, տարիքային խմբերի, նպատակային նշանակության, հրդեհանվտանգավորության դասերի և այլն: Կատարվել է սահմանների ճշգրտում, անտառային հատվածների գույքագրում, սերմնային տարածքների վեր հանում և գնահատում: Կատարվել է անտառպատման, անտառվերականգնման, անտառպահպանության և անտառօգտագործման ծավալների, անտառամերձ համայնքների բնափայտի և անտառի կողմնարդյունքի կարիքների, անտառային պաշարների օգտագործման գնահատում:

Գնահատվել է անտառանյութի օգտագործման սոցիալական և տնտեսական ազդեցությունը (բնափայտ, արոտավայրեր, կենսաարտադրանք, տեղական բնակչության զբաղվածություն, չքավորության աստիճան և եկամուտների ստացման հնարավորություններ, բնապատմական հուշարձանների դերը), ինչպես նաև դրանց նշանակությունը՝ տեղական կարիքների բավարարման տեսանկյունից: Սահմանվել է հատումների թույլատրելի քանակները, անտառպատմանը, անտառվերականգնմանը, անտառպահպանմանն ուղղված միջոցառումները:

Կառավարման պլանով նախատեսվում է նաև կենսաբազմազանության գույքագրման և գնահատման, բարձրարժեք բնապահպանական անտառների որոշման և քարտեզագրման, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների գնահատման աշխատանքներ, միջոցառումներ:

Անտառտնտեսության ներկայիս սահմաններում անտառմշակույթների հիմնման աշխատանքներ իրականացվել են դեռևս նախորդ դարի 30-ական թթ.ից:

2023թ. գույքագրմամբ անտառմշակույթների ճշտված մակերեսը կազմել է ընդհանուր 351 հա, չմիակցված սաղարթով անտառմշակույթները՝ ընդամենը 49,8 հա, կամ միացյալ ընդհանուր անտառածածկի ընդհամենը 0,9 %-ը: Անտառտնտեսությունում մինչև 25° թեքության հատված, հրդեհված, չվերականգնված տարածքները և անտառային բացատներն ու պարապուտ տարածքները զբաղեցնում են 3239,3 հա, որտեղ հիմնականում իրականացվում են անտառմշակութային աշխատանքները:

2024-33թթ. ժամանակաշրջանում նախատեսվում է անտառվերականգնման միջոցառումներ ընդհանուր 557,1 հա վրա, նույն թվում՝ բացատներում և պարապուտ տարածքներում՝ 336,2 հա, հատված տարածքներում և նոսրուտներում՝ 34,8 հա, ցածր լրիվության ծառուտներում՝ 178,1 հա և չմիակցված սաղարթով անտառմշակույթներում՝ 8,0 հա՝ հարթակների պատրաստման եղանակով՝ լրացուցիչ սերմերի ցանքսով, ինչպես նաև առանձին տարածքներում խրամատներում բուսակների կամ փոսերում տնկիների տնկման եղանակներով:

Տնկանյութի տեսականու ընտրությունը կատարվել է ելնելով կոնկրետ անտառաճման պայմաններից, հարմարվածության և արժեքավոր տեսակների վերականգնման և կենսաբազմազանության պահպանման հանգամանքներից:

2024-33թթ. համար ահրաժեշտ տնկանյութը, ներառյալ նաև բուսակները և լրացման համար անհրաժեշտ 20%-ը կազմում է 303930, իսկ միայն վերականգնման համար սերմերի պահանջը գնահատվել է կաղնի 12078,6 կգ, հաճարենի 85,39 կգ:

Անտառտնտեսության անտառպատման և վերականգնման նախատեսվող ծավալների տնկանյութի տարեկան պահանջարկը բաց արմատային համակարգով բավարարելու համար պահանջվելու է մոտ 0,6 հա մակերեսով տնկարան:

Անտառապատման և անտառվերականգնման նպատակով նախատեսվել է անտառային մշակույթների հիմնում՝ 371.01 հա մակերեսով, բնական վերականգնման օժանդակման նպատակով նախատեսվում է 30000 գծմ ցանկապատում, որի արդյունքում շուրջ 3000 հեկտար անտառներում կկանխվի անասունների մուտքը՝ մատղաշի պահպանման, բնական վերաճի աջակցման նպատակով:

Անտառային հողերի արտադրողականության բարձրացման նպատակով անտառշինությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- անտառսերմնային բազաների հիմնում սելեկցիոն հիմքի վրա,
- անտառային մշակույթների հիմնում,
- ցածր լրիվության ծառուտների արտադրողականության բարձրացում,
- բնական վերաճին օժանդակող համալիր միջոցառումներ,
- խնամքի հատումների իրականացում,
- անտառպահպանական և անտառպաշտպանական աշխատանքների բարելավում,
- ընտրովի սանիտարական հատումներ:

Բարձրարժեք և բարձր արտադրողական անտառային տեսակների հիմնման միջոցով ընդլայնվելու է անտառածածկ մակերեսը, վերականգնվելու են հատված կամ քայքայված անտառները, ծառուտները ձևավորվելու են ցանկալի ուղղությամբ, նպաստելով կենսաբազմազանության հաստատմանը և պահպանմանը:

Խնամքի հատումները նպաստելու են ծառուտների նպատակային ձևավորմանը, մասնավորապես տեսակային կազմի բարելավմանը, որակական և տարածքային տեղաբաշխմանը, հողապաշտպան, ջրապաշտպան, սանիտարահիգիենիկ, էսթետիկական հատկությունների բարելավմանը և անտառների արդյունավետության բարձրացմանը:

Ընտրողական սանիտարական հատումները բարելավելու են անտառի սանիտարական վիճակը, տեսակային կազմը և ստանալու են ծառուտների լրացուցիչ աճ՝ պահպանելով ստուգիչ շրջանում անտառածածկ մակերեսի չափը:

Անտառկառավարման պլանի նախագծում նախատեսվող համալիր միջոցառումների արդյունքում անտառտնտեսության անտառային հողերում տեղի կունենա անտառածածկ տարածքի տեսակարար կշռի ավելացում և ծառուտի կազմի բարելավում: 2024թ. համեմատությամբ անտառածածկ մակերեսը ստուգիչ ժամանակաշրջանի վերջում (2033թ.) կանխատեսվում է ավելացում 261,1 հա-ով, իսկ 2037թ.՝ ևս 259,9 հա-ով, ընդ որում հիմնականում ոչ անտառածածկ տարածքներում հիմնադրվող անտառմշակույթների իրականացման հաշվին, իսկ բնական վերկանգնմամբ՝ 2033թ. 100հա, 2037թ. ևս 50հա հեկտարով՝ նոսրուտներում և մասամբ փոքր մակերեսով բացատներում հիմնականում բռնու բնական վերականգնմամբ:

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Անտառածածկ մակերեսի ավելացումը նախատեսվում է անտառային բացատներում և նսրուտներում անտառմշակույթների հիմնման, ինչպես նաև բնական վերաճին օժանդակող միջոցառումների հաշվին:

Պահպանության հիմնական խնդիրն է նվազագույնի հասցնել անտառային և այլ էկոհամակարգերի ու պաշարների չհամակարգված օգտագործումը, նվազեցնել հրդեհների ռիսկերը, ինչպես նաև բնական վերականգնման օժանդակման միջոցառումներով վերականգնել դեգրադացված անտառային տարածքները:

Անտառների պահպանության ուժեղացման, բնականոն վիճակի պահպանման, վիճակի բարելավման և կայուն կառավարման իրականացման նպատակով ամբողջ տարածքը բաժանվել է 45 պահաբաժինների:

Անտառտնտեսությունում անտառային ճանապարհները հիմնականում փափուկ (բնահողային) գրունտային են և սեզոնային օգտագործման: Ջրահեռացման կյուվետների, խողովակների և խճածածկի բացակայության հետևանքով ճանապարհների վիճակն անմխիթար է: Ճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը գնահատվել է 864 կմ է: Ճանապարհների ձգվածությունը 1000 հա-ի հաշվով կազմում 18,4 կմ: Անտառկառավարման առաջիկա 10 տարիների համար նախատեսվում է անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում (150 կմ) և վերանորոգում (300 կմ):

Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսված գործողություններն ընդգրկում են Անտառտնտեսության տարածքը՝ ներառելով բնական լանդշաֆտները, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսները, բուսական և կենդանական աշխարհը, պատմամշակութային և բնության հուշարձանները, կանաչ տարածքները: Բուսական և կենդանական աշխարհի համար հիմնական վտանգ են հանդիսանում ապօրինի անտառհատումները, որոնք հանգեցնում են տարածքների մասնատմանը և դեգրադացիային: Կենսաբազմազանության համար վտանգավոր է նաև քիմիական նյութերի միջոցով վնասատուների դեմ պայքարը:

Անտառների կառավարման պլանով նախատեսվող միջոցառումների իրականացումը կնպաստի անտառի կենսամիջավայրի բարելավմանը և կայուն զարգացմանը՝ անտառների վերականգնմանը, անտառների օգտակար հատկությունների զարգացման և կայուն անտառօգտագործման ռազմավարության, կայուն անտառօգտագործման ինստիտուցիոնալ հզորությունների ամրապնդման և կատարելագործման, հիմնական ռազմավարական ուղիների ապահովմանը, այդ թվում՝ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարողությունների հզորացման, ինչպես նաև անտառի պահպանական և պաշտպանական ծառայությունների՝ սերմնային, տնկարանային, որսորդական տնտեսությունների, մարդկային ռեսուրսների ուսուցողական և կրթական կենտրոնների և տեղեկատվական ցանցի հիմնադրման, կողմնակի անտառօգտագործման զարգացման, կայուն անտառակառավարմանը նպաստող օրենսդրական հենքի բարելավմանը:

Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսվում է անտառպահպանման, անտառհատման, անտառի բնառեսուրսների օգտագործման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմմանը կամ կանխարգելմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների իրականացում, այդ թվում՝

- կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների խոցելիության և հարմարողականության գործոնների ուսումնասիրություններ և կոնկրետ միջոցառումների նախատեսում (տարեկան) և այլն,

- հակահրդեհային միջոցառումների իրականացում, հակահրդեհային նշանակության ջրամբարների կառուցում՝ 3 հատ,
- ջրամբարների/ջրավազանների օգտագործում տնկարանի ոռոգման նպատակով՝ բույսերի աճն ապահովելու նպատակով,
- հակահրդեհային նշանակության ճանապարհների կառուցում (150 կմ), հակահրդեհային նշանակության ճանապարհների նորոգում (300 կմ),
- տարածքի էկոլոգիական հավասարակշռության, կենսաբազմազանության, ինչպես նաև կենսամիջավայրի բնական պայմանների հնարավորինս պահպանում,
- Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների դաշտային ուսումնասիրություններ (գույքագրման իրականացում, թվաքանակի հաշվառման և պոպուլյացիաների գնահատման աշխատանքներ)՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել վտանգված տեսակների հայտնաբերմանը,
- էկոհամակարգի և դրա բաղադրիչների վրա մարդածին գործոնների ազդեցության բացահայտում,
- վնասատուների դեմ պայքարի դեպքում՝ հնարավորիս ավիացիոն պայքարի ձևերից խուսափում և կենսաբանական պայքարի տեսակի կիրառում: Ավիացիոն պայքարի անխուսափելիության պարագայում վերջինիս տեղայնացնում: Թունաքիմիկատների օգտագործման դեպքում՝ ցանկի համաձայնեցում մասնագետների հետ,
- հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում աշխատանքները դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին և այլն:

Պատճառաբանական մաս. Հիմնադրույթային փաստաթղթի փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված պահանջներին համապատասխան: Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսված գործողություններն իրականացվելու են «Արծվաբերդի անտառտնտեսության» մասնաճյուղի ընդհանուր տարածքում:

Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսված համալիր միջոցառումների և մոնիթորինգի արդյունքում Անտառտնտեսության անտառային հողերում տեղի կունենա դեգրադացված անտառների վերականգնում, անտառածածկ տարածքի ընդարձակում և տեսակարար կշռի ավելացում, ծառուտի կազմի բարելավում, անտառի արտադրողականության բարձրացում, անտառօգտագործման ֆինանսական բազայի կայունություն, անտառի՝ մթնոլորտից ածխածնի կլանման կարողությունների վերականգնում, անտառային էկոհամակարգի կայուն զարգացում:

Նախատեսվող միջոցառումների ծրագրի համար հիմք են հադիսացել ՀՀ անտառային օրենսգիրքը (2005թ.), սանիտարական հատումների իրականացման կարգը և անտառկառավարման պլանների մշակման հրահանգը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Անտառտնտեսության 2024-2033թթ. կառավարման պլանը, անտառտնտեսության ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական ակտերը և միջազգային պայմանագրերը:

Հանդիսանալով մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ էկոլոգիական միջավայր՝ կենսաբազմազանությունն ունի բնապահպանական կարևոր նշանակություն: Այն անհրաժեշտ գործոն է երկրի կլիմայի ձևավորման, ջերմային և ջրային ռեժիմների կարգավորման, օդը վտանգավոր գազերից և այլ նյութերից մաքրման, հողը էրոզիոն գործընթացներից պահպանման, շրջակա միջավայրի սանիտարահիգիենիկ բարվոք վիճակի ապահովման համար:

Փորձաքննության գործընթացում Անտառտնտեսության 2024-2033թթ. կառավարման պլանի հիմնադրույթային փաստաթուղթը կից նյութերով լրամշակվել է՝ հաշվի առնելով Անտառտնտեսությունում ընդգրկված անտառպետությունների և ընդգրկած և հարակից համայնքների կողմից ներկայացված առաջարկությունները և դիտողությունները: Փորձաքննության փուլում օրենսդրությամբ սահմանված կարգով Բերդի, Իջևանի և Դիլիջանի համայնքապետարաններում իրականացվել են հանրային լսումներ:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրույթային փաստաթղթով նախատեսված միջոցառումները կատարել նախատեսված ժամանակահատվածում:
- Հիմնադրույթային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:
- Կարևորելով համայնքների հողային հաշվեկշիռներում անտառային նպատակային նշանակության հողերի, դրանց հողատեսքերի ճշգրիտ հաշվառման անհրաժեշտությունը՝ ծրագրի իրականացման ընթացքում հստակեցնել հիմնադրույթային փաստաթղթով ամրագրված անտառտնտեսության սահմանները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԷՅՋ ՋԻ ԷՅՋ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ «Արծվաբերդի անտառտնտեսության» մասնաճյուղի 2024-2033թթ. կառավարման պլանի ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան